

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՑ ՆՇԽԱՐՆԵՐ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՍԱՂՄՈՍԱՑ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ թարգմանական մատենագրության յուրաքանչյուր միավորի հայտնաբերումը, հրատարակումն ու արժևորումը կարևոր է ոչ միայն հայ թարգմանական գրականության պատմության, այլև շահեկան՝ մասնավորապես, հայ թարգմանական գրականության ծավալաքանակի ճշտորոշման համար: Մատենագրական այսօրինակ միավորներն, ինչպես հայտնի է, շատ հաճախ լինելով ոսկեդարյան, այսօր առանձնակի կարևորություն են ստանում նաև հայոց լեզվի պատմության ուսումնասիրման համար:

1914 թ. արքունի խորհրդական, Վիեննայի համալսարանի աստվածաբանական բաժնի երբեմնի ուսուցչապետ W. A. Neumann-ի անձնական գրադարանում պահվող հայերեն կրկնագիր ձեռագրերի մեջ երջանիկ մի պատահականությամբ Mspt. syr 3 համարը կրող ասորերեն մի գրչագրում Հ. Ն. Ակինյանն ի հայտ բերեց Հովհան Ոսկերեբանի, մինչ այդ հայերեն թարգմանությամբ որոշ հատակոտորներով միայն հայտնի¹, սաղմոսաց ընդարձակածավալ մեկնության (շուրջ ճժէ—ճԽճ սաղմոսաց մեկնությունը պարունակող) մի հատվածը՝ գրչագրված, ըստ երևույթին, 2—է դդ.²: Հանգամանալից նկարագրելով ձեռագիրն ու իբրև «ճաշակ բանասիրաց» հրատարակելով առանձին ընթեռնելի հատվածներ՝ երկասիրության հայերեն թարգմանության ու հունարեն բնագրի խնդրական պարագաների լուսաբանմանը նվիրված բաժնում հայագետը գրում է. «Ստուգիվ անբացատրելի էր մեզի թե ինչպես վրիպած էին թարգմանչաց մտադիր աչքեն՝ Ոսկերեբանի մեկնական գրվածոց ամեննն գեղեցիկն և ներկուտն սաղմոսաց մեկնությունքն, մանավանդ որ սաղմոսաց ուրիշ համապատասխան մեկնություն մ'ալ չէին տված: Այս հիմամբ կրնաինք ի հառաջագունն իսկ ենթադրել սույն թարգմանությանս գոյությունը, թեև անոր հետքն հայ մատենագրության մեջ իսպառ կորսված երևար: Ո՞չ

¹ Տե՛ս «Յովհաննու Ոսկերեբանի ճառք», Վենետիկ, 1861, էջ 110—122, 773—778, «Յովհաննու Ոսկերեբանի... Մեկնութիւն թղթոցն Պաղոսի», հ. Բ, Վենետիկ, 1862, էջ 654—676, «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ...» (հրատ. Կարապետ Եպիսկոպոս [Տեր-Մկրտչյան]), Ս. էջմիածին, 1914, էջ 319:

² Հ. Ն. Ակինեան, Յովհաննու Ոսկերեբանի սաղմոսաց մեկնութեան նորագիտ հայերէն թարգմանութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 2—31:

ապարեն նույն Ոսկերերանի ծանոթ մեկնությունքն ալ գիպվածով իմն հասած են մեզի...: Զարմանք չէ ուրեմն եթե այսպիսի բախտի պատահած ըլլա նաև սաղմոսաց մեկնությունն, որուն գոյությունն այսօր երևան կ'ելլէ դիպվածով մը...: Ցավ է, սակայն, որ այս հայտնությունը կոչված է միայն համողելու զմեզ, թե ստուգիվ գոյություն ուներ այնպիսի թարգմանություն մը՝ առանց զոհացնելու մեր ախորժակն վայելելու ամբողջական բնագրին վայելչությունը: Սաղմոսաց մեկնությանց թարգմանությունս կատարված է Ս դարուն առաջին կեսին՝ միաժամանակ Ոսկերերանի այլ մեկնությանց և նույն նկարագրով ըստ ամենայնի՝ ազատ ըստ ճարտարության քաջ թարգմանչին, բարձր, ճոխ ու կանոնյալ դասական հայերենով: Ոչ միայն նյութին ընտրությունն, այլև լեզվին ազնվությունը գերազանց կրնժայեն թարգմանությունս և հարզն անզնահատելի: Ցանկալի էր, որ կարգացված քանի մը էջերն հետաքրքրություն դարթուցանեին ամբողջ կրկնագիրն ընթերցանելի ընելու և զբժոյն կարևորությունը գրգիռ ըլլաւ բանասիրաց խուզակելու գրչագրաց հավաքածուներու մեջ ամբողջական բնագիրը...»³ (ընդգծումը մերն է—Ղ. Բ.):

Դժբախտաբար քաղաքական վերահաս պայմաններն ու աննպաստ ժամանակը այնպես էլ թույլ չտվեցին հայագետին իրագործել կրկնագրի նմանատպության մասին հայտնած իր շահեկան դիտավորությունը: Զեռագրի հետագա ճակատագիրն այժմ անհայտ է:

Մի քանի տարի անց, դարձյալ երջանիկ պատահականությամբ, Ն. Ակինյանը Երնջակի Նորանիշիկ գյուղում 1669 թ. ընդօրինակված (ալեքսանդրապոլցի Կեղամ Տեր-Հարությունյանցին պատկանող) մի ձեռագրի պահպանակներում ի հայտ բերեց (և և ԽԲ) սաղմոսաց մեկնության նշխարներ, որոնք բանասերի կողմից հրատարակվեցին Ոսկերերանի անվամբ⁴:

Ինչպես հայտնի է, Ոսկերերանի սաղմոսաց մեկնության հունարեն բնագիրը ամբողջական չէ: Մեզ են հասել միայն Գ-ԺԲ, ԽԱ, ԽԳ-ԽԹ, Ս (հատված), ՀԱ (հատված). ԸԳ-ԸԶ, ԸԼ-ԸԺէ, ԸԽԵ, ԸԺԹ-ԸՄ սաղմոսաց մեկնությունները⁵: Այսու հայագիտության (և ոչ միայն հայագիտության) համար բանասիրական, լեզվամշակութային մեծ կարևորություն կարող են ներկայացնել ոչ միայն ընդհանրապես հայերեն թարգմանությամբ ի հայտ բերվող Ոսկերերանի սաղմոսաց մեկնության հատվածները, այլև հեղինակի այս երկասիրության հատկապես այն նշխարները, որոնց համապատասխանող հունարեն բնագրերն այժմ հայտնի չեն: Շնորհիվ, մասնավորաբար, երկրորդ իրակության, հայերեն թարգմանությունը, բնագրային արժեք ստանալուց դատ, այս սյարագային, ձևոր է բերում արդեն բանասիրական հանգամանք: Բանն այն է, որ ոսկերերանյան երկերի հրատարակիչները, սկսած Montfuncon-ից, զանազան, հաճախ իրարամերժ կարծիքներ են հաղորդել այս գործի մասին՝ Ոսկերերանի սաղմոսաց մեկնությունը քննող հետազոտողներից Bauer-ի

³ Ն. Ակինյան, *նշխ. աշխ.*, էջ 23—24:

⁴ Ն. Ակինյան, *Երկու նորագույն հատակոտորներ Յովհան Ոսկերերանի սաղմոսաց մեկնության հայերեն թարգմանությունն*, «Հանդես ամսօրեայ», 1922, էջ 322—331:

⁵ Տվյալները բերված են ըստ՝ M. Geerard, «Clavis Patrum Graecorum», vol. II, Ab Athanasio ad Chrysostomum, Brepols-Turnhout, 1974, p. 519—520, 552—556.

Հայրաբանական այս կարևոր մատենացույցը մեզ տրամադրեց բանասեր, ասորագետ Է. Տեր-Պետրոսյանը:

կարծիրով, օրինակ, Ոսկերերանը գրել է ձեռագրերում և տպագրությանը հիմա հայտնի մեկնությունները միայն, «ուստի և այժմյան ծանօթ ձեռագրաց մեշ որևիցե թերույթ չկա»⁶: Այս կարծիքը, որ հիմնված էր լատին եկեղեցու նշանավոր հայրերից Ս. Հերոնիմոս Երանելու 404 թ. Օգոստինոսին հղած թղթում սաղմոսաց լիակատար մեկնություններ հեղինակած մատենագիրների շարքում Հովհան Ոսկերերանի անվան բացակայության փաստի վրա⁷, մերժելի է թվում ոչ միայն հայրախոսական վկայությունների ծաղկաբաղ օտար ժողովածուներում Ոսկերերանի այս գործից բերված առկոչումներով և հայ թարգմանական մատենագրության մեջ մինչ այդ հայտնի (հունարեն բնագրում բացակայող) թեկուզև աննշան հատակոտորների առկայությամբ⁸, այլև նորերս հայտնաբերված երկու մեծարժեք հատվածներով⁹: Հատվածներ, որոնք միանալով խնդրո առարկա երկի հայերեն թարգմանության մինչ այդ արդեն հայտնի նշխարներին, վկայում են այն մասին, որ «հայ՛! հավանորեն ծանոթ էին Ոսկերերանի սաղմոսաց լիակատար մեկնության բնաթի բնագրի մը»¹⁰ (ընդգծումը Ակինյանինն է—Հ. Ք.):

Ոսկերերանի սաղմոսաց մեկնության նորահայտ հատվածները գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանի 472 (230ա—237բ) և 2783 (238ա—241բ) թվահամարը կրող ձեռագրերում, «Պատճառք սաղմոսին զոր արարել է տեան Բարսղի և Յովհաննու Ոսկերերանի» խորագիրը կրող նյութի մեջ (№ 472, էջ 215ա—239բ, № 2783, էջ 226բ—244ա)¹¹: Սակայն երկու ժողովածուներում էլ «պատճառքի» հանդամանքով ներկայացված նյութերը միատարր չեն: Եթե երկու ձեռագրերում էլ «պատճառքը» սկսվում է Բարսեղ Կեսարացու Պահոց գրքից բերված «Ի սաղմոսն առաջին» (ԺԱ) ճառով¹², ապա Ոսկերերանի հեղինակած «պատճառքը», որ երկու գրչագրերում էլ զատորոշված չէ նախորդ նյութից, № 472 ձեռագրում սկսվում է Ոսկերերանի՝ Եսայու մարգարեության Ե 1 համարի մեկնությունից (էջ 222բ) և շարունակվում մինչև նույն գլխի 7-րդ համարի մեկնությունը (էջ 229բ): Այնուհետև ընդհատվում է նյութի մեջ ներմուծված սաղմոսաց մեկնության հատվածով ու դարձյալ շարունակվում «պատճառքի» եզրափակիչ մասում (էջ 238ա—239ա) և ավարտվում Եսայու տվյալ համարի՝ գրչի կարճառոտ հավելում-բացատրությամբ: Եսայու մեկնության այս հատվածը ոչ այլ ինչ է, բայց եթե հունարեն բնագրի

⁶ «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 25—26:

⁷ Անդ, էջ 25—26:

⁸ Տե՛ս «Յովհաննու Ոսկերերանի ճառք». Վենետիկ, 1861, էջ 773—778, «Հանդէս ամսօրեայ», 1922, էջ 325—330, «Կնիք հաւատոյ...», էջ 319:

⁹ Բացառված չէ, որ Ոսկերերանն իր այս երկը շարագրած լինի 404—407 թթ. միջև, այսինքն՝ Հերոնիմոս Երանելու կազմած ցուցակից հետո, մինչև իր մահն (407 թ.) ընկած տարիների ընթացքում:

¹⁰ «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 27—28:

¹¹ Այս նույն խորագիրն է կրում նաև Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1398 ձեռագրում (էջ 323ա—328բ) ղեւեղված սաղմոսաց պատճառքը, սակայն այստեղ բացակայում են մեկ հատաբրբրող ոսկերերանյան հատվածները:

¹² Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 822, էջ 99բ—109բ:

և հայերեն թարգմանության համապատասխան մասի¹³ խմբագրում-համառոտումը՝ կատարված, ըստ երևույթին, հայ գրչի կողմից¹⁴:

Այլ է նյութերի դասավորությունը № 2783 ձեռագրում: Ի տարբերություն № 472-ի, № 2783 ձեռագրում բացակայում է Եսայու մեկնության հիշյալ հատվածը: Եթե երկու ձեռագրերում էլ սաղմոսաց մեկնությունը սկսվելով Ա 1 համարից՝ համընթաց է մինչև «խոտորել ի շարէ և առնել զբարի» բառերը (№ 2783, էջ 238ա—241 բ, № 472, էջ 230ա—234ա), ապա տարբեր է դրա շարունակության մեջ: № 2783 ձեռագրում «...ոչ միայն, ասէ, զգուշացուցանեմ յամբարշտաց և ի մեղաւորաց և ի ժանդից» բառերով սկսվող հատվածը (էջ 241բ—243բ), ելնելով № 1398 ձեռագրի համապատասխան հատվածներում առկա լուսանցային «Եպ», «Եփ» նշումներից՝ խմբագրումն է Եպիփան Կիպրացու և Եփրեմ Ասորու Ա սաղմոսի մեկնության (№ 1398, էջ 332ա—333բ): Այնուհետև բնագիրը շարունակվում է սաղմոսաց մեկնության հետ շառնչվող այլ բառերով, որոնք պատկանում են նվիրապետական ինը աստիճանակարգին վերաբերող, հունարան հայերենով շարադրված մի տեքստի: Մինչդեռ № 472-ում վերոբերյալ «խոտորել ի շարէ և առնել զբարի» բառերին հետևում է ԶԶ 2 սաղմոսի մեկնությունը (էջ 234ա) և շարունակվում մինչև «խաւսի զխաղաղութիւնս և առնէ խաղաղութիւնս իւրոց» բառերը (էջ 237բ), որից հետո շարունակվում է Եսայու խմբագիր մեկնության հիշյալ հատվածի երկրորդ մասը, որով և ավարտվում է «պատճառք»:

Այսպիսով, «պատճառքում» գետեղված խնդրո առարկա հրատարակելի նյութերը սաղմոսաց Ա գլխի 1—2 և ԶԶ գլխի 2 համարի մեկնություններն են, որ գրիչների կողմից բաղվելով Հովհան Ոսկերեբանի սաղմոսաց ձույլ, ամբողջական մեկնությունից, այստեղ են ներմուծվել իրրև «պատճառքի» մասեր:

Այն, որ սաղմոսաց սույն մեկնությունն իրապես Ոսկերեբանինն է, հավաստվում է ոչ միայն ձեռագրական ավանդույթով (երկու գրչագրերում էլ գործս հիշվում է Ոսկերեբանի անվամբ) և լիզվածական նկարագրի մասնահատկությամբ, այլև մեկ այլ իրողությամբ. Սաղմոսաց մեկնության մեջ վկայակոչելով Սաղ. Ա 2-ը՝ Ոսկերեբանը սրան անընդմիջաբար հավելում-կցում է Բ օրինաց Զ 7 կամ ԺԱ. 19 համարը: Սուրբգրային համարների այսօրինակ հարակցում առկա է դարձյալ Ոսկերեբանի «Ի բան տերունական որ ասէ «Արթուն կացէր... նախախնամութիւն Աստուծոյ և բարեբարութիւն նորայայնժամ յայտնի է...» սկսվածքով ճառում ևս, ուր կարդում ենք. «Եւ աչք, և

¹³ Sk'a Migne, PG. t. 56, col. 56—60, «Երանելոյն Եովհաննու Ոսկերեբանի Մեկնութիւն Եսայեազ մարգարեի», Վենետիկ, 1880, էջ 45, տող 1—էջ 51, տող 15:

¹⁴ Այս հանգամանքը նախ բացատրելի է նրանով, որ սուրբգրային վկայակոչումները բերված են ըստ Աստվածաշնչի հայերեն ընկալյալ թարգմանության, մինչդեռ սպաղարում դրանք նույնանում են, հուն. բնագրում առկա վկայակոչումներին, օրինակ, եթե Ես. Ե 3-ում հուն. «εν χείρατι» ձևի դիմաց տպագիրն ունի «չեղչէր» ճիշտ թարգմանությունը, ապա խմբագիր մեկնությունն մեջ այն փոխարինված է «չանգեան» ձևով, որ նույնանում է Ս. Գրքի հայ կանոնական թարգմանությանը: Ես. Ե 1 համարում հուն. «τοῦ ἀγαπινοῦ προ» («սիրելույ իմոյ») ձևի դիմաց խմբագրությունս տալիս է «սիրելույ նորա» հայ կանոնական ընթերցվածք: Մեկնության խնդրո առարկա հատվածի՝ հայ միջավայրում խմբագրված լինելու մասին է խոսում և մեկ այլ հանգամանք. Շատ հաճախ խմբագրողը մեկնության հայերեն թարգմանությունից, առանձին պարբերությունների ձևով, բառացի ներմուծումներ է կատարում խմբագիր հատվածի մեջ:

միտք, և խորհուրդք իւր ի վերայ որդւոց իւրոց «ի աւէ և զիշերի» (Սաղ. Ա. 2) «ի նստել ի տան ի զնալ ի նանապարհ» (Թ. օրէնք Զ 7, ԺԱ. 19) և ամենայն ժամ միտքն ծնողին ևս զաւակն իւր»¹⁵ (այս և հետագա ընդգծումները մերն են—Հ. Ք.):

Թվում է տեսականորեն ևս հնարավոր է Ոսկերերանի հեղինակային պատկանելութունը փաստարկել: Այդ է հավաստում հեղինակի «Ի Սուրբ Երրորդութիւնն» երկի և սաղմոսաց մեկնութիւն համարելով հատվածների զուգադրումը.

«Եւս է Հայր, վասն զի «Աստուած յոյս է» (Ա Յովհ. Ա 5). Եւս է և Որդին. «Ես եմ յոյս աշխարհի» (Յովհ. Ը 12): Եթե ոչ էր յոյս և Հօգին Սուրբ...»: «Կնիք հաւատոյ...», էջ 47, տ. 17—19:

«...Եւս է Հայր, յոյս է և Որդին, յոյս է և ամենայն Սուրբ Հօգին...»¹⁶:

Ոսկերերան, «Պատճառք» սաղմոսաց, N 472, էջ 232ա:

Եվ իրապես, ելնելով երկուստեք ընդգծյալ բառերից՝ կարելի է հետևցնել, որ Սաղմոսաց մեկնութիւնից վկայարկւած հատվածը ոչ այլ ինչ է, քան տեսական (նաև՝ բնագրային) ամփոփումը Ոսկերերանի «Ի Սուրբ Երրորդութիւնն» երկի համապատասխան հատվածի:

Ինչպես երևում է, Ոսկերերանի սաղմոսաց մեկնութիւն հայերեն թարգմանութիւնը հրապարակի վրա է եղել մինչև Ժ—ԺԱ դդ., որովհետև ԺԲ—ԺԵ դդ. սաղմոսաց մեկնութիւն հեղինակած և սաղմոսներին անդրադարձած հայ մատենագիրներից և ոչ մեկը (Հովհաննես Սարկավագ, Ներսես Լամբրոնացի, Վարդան Արեւելցի, Վանական վարդապետ, Հովհաննես Գառնեցի, Կիրակոս վարդապետ, Դավիթ փիլիսոփա, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Հովհաննես Հոլով, Նփրեմ Սսեցի և Միրայել Չամչյան) չի վկայակոչում Ոսկերերանի այս մեկնութիւնը¹⁷: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ասորերեն վերոհիշյալ կրկնագիրը գրչագրվել է մոտավորապես ԺԱ.—ԺԲ դդ. «հայագետ ասորու» կամ «ասորագետ հայի» կողմից¹⁸, կնշանակի, այսուամենայնիվ, Ոսկերերանի այս երկի կամ սրա մաս կազմող «պատճառքի» մասին հայ մատենագիրները թվում է մինչև ԺԱ.—ԺԲ դդ. պետք է որ գոնե հեռավոր պատկերացում ունենային: Խնդրո առարկա մեկնութիւնը կամ, որ ավելի հավանական է, սույն «պատճառքին» ծանոթ հայ մատենագիրներից մեկը թերևս Ներսես Շնորհալին է: Այս մասին կարող են վկայել Ոսկերերանի սաղմոսաց մեկնութիւն և Ն. Շնորհալու Մատթեոսի մեկնութիւն ներքորերյալ հատվածները.

«...քա այնմ յորում առաջ իսկ ասաց Պաղոս. «Երանելին միայն հզարն քազար քազ[արաց]» (Ա Տիմոթ. Զ

«զի՞նչ է սահման երանութեան, յորմէ կարեմք և զայլս իմանալ: Երանութիւն պարտութիւն է ամենայն բարեաց... և:

15 Տե՛ս Մատենադարան, ձեռ. N 4774, էջ 337բ—338ա:
16 Հմմտ. «Սերերիանոսի նմեսացոյ զարադացոց եղիսկոպոսի հառք ժն», Վենետիկ, 1830, էջ 6:
17 Հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 25—26:
18 Անդ, էջ 7:

15) ...Իսկ երանութիւն պարտութիւն է ամենայն բարեաց...»

Ոսկերերան, Մեկնութիւն սաղմոսաց, № 472, էջ 232ա-Բ:

արդ՝ առաջին մեզ ծանուցեալ լիցի երանութեանց ընդունող տիրապէս չէիցս աստուածութիւնն, ըստ առաքելոյ թէ՛ «երանելիքն և միայն հզօրն...»¹⁹ (բնագրային ընդգծումները մերն են—Ղ. Ք.):

«Մեկնութիւն սուրբ աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն ներսիս Շնորհալուս...», Կ. Պոլիս, 1825, էջ 87:

Դեռ ավելին. մեկ անգամ արդեն ծանոթ լինելով Ոսկերերանի այս երկասիրութեանը՝ ներսես Շնորհալին, թվում է, կարող էր օգտվել դրանից և իր այլ գործերում: Այս հանգամանքի մասին է խոսում սաղմոսաց մեկնության և «Հաւատով խոստովանիմ»-ի առաղրվող հատվածների նույնությունը.

«եռկասջիբ ի դա (a) ի տէ և գիշերի (b) նստել ի տան և զնալ ի նանապարհ և ննջել և յառնել»²⁰:

Ոսկերերան, Մեկնութիւն սաղմոսաց, № 472, էջ 233ա-բ

«Աջ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ (a) ի տուէ և գիշերի (b) ի նստիլ ի տան, ի զնալ նանապարհ ի ննջել և ի յառնել»:

«Հաւատով խոստովանիմ»

Զուգահիշ հատվածների ընդգծված մասերը ոչ այլ ինչ են, քան վերն արդեն դիտարկված Սաղ. Ա. 2 (a) և Բ օրէնք Զ. 7 կամ ՓԱ. 19 (b) տեղիների համակցումը: Այստեղ, սակայն, կարևորը ոչ միայն աստվածաշնչական տարբեր տեղիների համակցման համապատասխանության փաստն է, այլև այդ համակցման մեջ սուրբգրային համարների հերթագայման շարահյուսական աչքի դարնող նույնությունը:

Արդ, այսօրինակ փաստերի առկայության պայմաններում բացառված չէ, որ, հավասար հնարավորությամբ, «Հաւատով խոստովանիմ»-ի այդ պատկերը կարող էր բերված լինել ինչպես Ոսկերերանի հիշյալ ճառից, այնպես էլ (առավել հավանական է) նրա սաղմոսաց մեկնության առաղրված հատվածից: Իսկ որքանով ներսես կամբրոնացին, որ կրտսեր ժամանակակիցն էր Ն. Շնորհալու, իր սաղմոսաց մեկնության մեջ շի հիշատակում Ոսկերերանի խնդրո առարկա երկը, կնշանակի ներսես Շնորհալու ձեռքի տակ եղել է ոչ թե Ոսկերերանի սաղմոսաց մեկնությունը, այլ, ամենայն հավանականությամբ, այդ ընդարձակ երկասիրությունից (մինչ այդ արդեն) ընտրաբար բաղված և կազմված հրատարակվող «պատճառքը»:

¹⁹ Ոսկերերանի սաղմոսաց «պատճառքի» համապատասխան հատվածից, հավանաբար ներսես Շնորհալու Մատթէոսի մեկնության միջոցով, իր հերթին օգտվել է Սարգիս Շնորհալին «Կաթողիկէ թղթոց» մեկնության մեջ. տե՛ս «Նոր բողոքիք Հայկազեան լեզուի», հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 629:

* Սակայն բացառված չէ, որ Շնորհալին ընդգծյալ հատվածի համար կարող էր աչքի առջե ունենալ նաև Գրիգոր Նյուսացու երկերից մեկի «Ծրանութիւն է պարտութիւն ամենայն բարւոյն իմանալեաց, յորոց հեռի է ի բարի ցանկութենէն...» պարբերությունը. տե՛ս Ղ. Ք. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 308:

²⁰ Եպիփան կիպրացու սաղմոսաց մեկնության մեջ համապատասխան մասում վկայակոչվում է սուրբգրային այս մեջբերման միայն Ն հատվածը, այն էլ՝ «խորհեսցիս ընդ սմայ ի նստել քում և յառնել, ի կալն քում և ի զնալն ի նանապարհ» բնագրային կերտվածքով (Մատենադարան, ձեռ. № 1398, էջ 332ա, հմմտ. ձեռ. № 1144, պահպանակ Ա, էջ 2բ): Այնպես որ բացառվում է Եպիփանի մեկնությունից ներսես Շնորհալու օգտվելու նվազագույն հնարավորությունն իսկ:

Ելնելով հոսրով Անձևացու և Գրիգոր Մազիսարոսի մոտ գտնվող (առաջին զուգադրության մեջ բերված) համարնույթ հատվածների առկայությունից²¹, պետք է ենթադրել, թե Ոսկերերանի այս երկն առհասարակ հայ մատենագրությանը ոչ անհայտ և, ինչպես երևում է, մինչև ժ—ժԱ դդ. մեղանում կենցաղավարող գործերից էր:

Սաղմոսաց նորահայտ մեկնության մեջ առկա նորակազմություններից են բանամտութիւն², Բառազարար, վերատրապես բառերը, որոնք բացակայում են գրարարի բառագանձը ներկայացնող մի այնպիսի ընդգրկուն բառարանում, որպիսին է «Նոր Հայկադյանը»:

«Պատճառքի» բաղադրամիավորներում (ինչպես նաև՝ դրանց հերթագայության մեջ) առկա տարբերությունները վկայում են գործիս (ըստ երևույթին մի նախագաղափար միավորից ծագող) տարբեր գրչագրերից ընդօրինակված լինելը:

№ 472 (A) ձեռագիրն ընդօրինակվել է Մարկոս երեցի կողմից, 1229 թ.: Տեղը՝ անհայտ: Գրչագիրս բաղկացած է 265 թերթից: Գրված է խիստ անկանոն բոլորգրով: Բնագրային աղճատումները վկայում են այն մասին, որ ձեռագիրը ընդօրինակվել է, ըստ երևույթին, արդեն բավական խաթարված մի տեքստից: Ի դեպ ձեռագրում 233-րդ թերթահամարը կրկնված է, որի պատճառով հետագա թերթակալումը սխալ հերթագայությամբ է նշվել:

Երկրորդ՝ № 2783 (B) ձեռագիրն ընդօրինակվել է Գրիգոր վարդապետի (Ա) և Վարդան գրչի (Բ) կողմից ժԲ դ., 1409 թ.: Տեղը՝ անհայտ: Գրչագիրս բաղկացած է 264 թերթից: Գրված՝ կանոնավոր բոլորգրով: Սաղմոսաց «պատճառք» պարունակող ձեռագրի երկրորդ մասը միասյուն է²²: Տեքստի առանձին հատվածներ (հատկապես թերթերի եզրամասերում) մաշվելով դարձել են գրեթե անընթեռնելի: Դժբախտաբար եղծված են ոչ միայն բառեր, այլև տեղատեղ՝ նույնիսկ տողեր: Այսօրինակ տեղիները, հնարավորության սահմաններում, վերականգնել ենք անկյունագծերում:

Նկատի առնելով բնագրի ոսկեդարյան լինելը՝ այն բերում ենք ըստ նախնական դիտվող A ձեռագրի ուղղագրության:

Ի ՍԱՂՄՈՍԱՅ ՄԵԿՆՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ²³

A 230ա «Արդ մի նստիցիս յաթոռ ժանդից եւ կալցիս հաղորդութիւն ընդ
B 238ա մարդկան ապականեցելոյ ժանդացուցանողաց, եւ մի յամենցի ի խորհուրդս շարութեան»¹, զոր մարգարեն ուսուցանէ հոգովն սրբով եւ

²¹ Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Բ, էջ 629:

² Բառս, հավանաբար, չպետք է շփոթել Եպիփան Կիպրացու սաղմոսաց մեկնության համապատասխան հատվածում առկա «ի բնէ մտիցն» հարադրության հետ, ձեռ. № 1144, պահանակ Ա, էջ 2բ:

²² Ձեռագրերի համառոտ նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, էջ 328, 375:

²³ Երազրումը մերն է—Զ. Ք:

¹ Սաղ. Ա 1:

ասէ. «Եր[ան]եալ [է] նա, [որ] ոչ նստաւ»²: Այսոքիկ վարդապետա-
րենն եւ բարոզարար ա(սա)ցեալ, որ վերագրեալդ է եւ ունի դիմառնա-
բար ասացեալ մարգարեութիւնս կատարել ի վերայ նախապետացն
եւ մարգարեիցն: Առաւել ի վերայ Մովսիսի եւ Դանիելի եւ մակարա-
յեցոցն եւ Եղիայի եւ Նոյի³ եւ Յովսիփայ, Աբրահամու եւ Սահակայ
եւ Յակոբայ եւ Յեսուայ եւ Սամուելի եւ նոյն իսկ Դաւթի, իսկ առ ի
միտս ի վերայ Քրիստոսի եւ առաքելոցն եւ մանավանդ ի վերայ մար-
տիրոսացն եւ վկայիցն, վասն որոյ պարտք է գեղանական իւրաքանչիւ-
րոց յայտնել խորհուրդ, եւ ցուցանել, թէ ոչք են երանութեանց արժա-
նաւորք: Նախ՝ առաջին Հաբել Երանելի, որ ոչ խոտորեցաւ ի շար եւ

B 238բ անգորոյն||խորհուրդս Կայենի, այլ անարատ մտաւք ի բոլոր||սրտէ

A 230բ մատոյց զհաճոյական պատարագն Աստուծոյ եւ ընդունելի եղեւ զնոյն
երանութիւն: Ենովս ընկալաւ, ուստի եւ արժանի եղենն նախ քան զա-
մենայն մարդիկ կարդալ յուսով զանուն Տեառն Աստուծոյ: Եւ յոյս
նորա ընդունել[ի] եւ հաճոյ եղեւ Աստուծոյ: Այսպէս եւ Ենովք ժա-
ռանկորդ եղեւ աչսմ եղեալ եւ յայնմ երանութեան, զկնի հաճոյական
վարուցն եւ արդարագնացիկ կենացն, յաղագս որ ի մշտնջենաւ[որ]
եւ անանց կեանս փոխեալ եղեւ, իսկ զնոյէ զերանելոյն զինչ ար-
դեւք ասասցուք, որ ի մեջ խառնակեց մարդկանս: Յորժամ ամենայն
մարմին սպականէր զճանապարհս իւր առաջի Աստուծոյ, եւ նա կու-
սութեամբ եւ մարգարէութեամբ կազմեաց^{**} զանձ իւր տաճար Աս-
տուծոյ, որ եւ յաղթեաց բոցո ցանկութեան ի մեջ վաւաշտ եւ պղծա-
լից կանանցն, վասն որոյ երկրորդ նախահայր մարդկութեանս եղեւ
յետ ջուրցն հեղեղի եւ կատարեալ արդարութեամբ գովեցաւ նա յԱս-
տուծոյ: Իսկ զհաւատոցն Աբրահամու առաքեալ[ն] Պաւղոս յայտնա-

A 231ա պէս ասէ. «Հաւատաց Աբրահամ յԱստուծոյ եւ համար[եցաւ]||նմա
արդարութիւն»³: Նոյնպէս եւ Իսահակ Երանելի եւ Յակոբ, մինն յա-
ղագս խորհրդական պատարագին եւ միւսն վասն [ս]ք[անչ]ելի տ[ե]խ]ս-
լեանն եւ հանդիպմանն Աստուծոյ, եւ երկորինն երանեցան արհնու ||

B239ա թեամբ յԱստուծոյ: Եւ գովեցան յԱստուծոյ ըստ աչսմ արինակի եւ
Յովսեփ եւ [Յ]որ Համբերող նահատակն ի դարս ժամանակաց իւ-
րեանց ոչ գնացին ի խորհուրդս ամսարշտաց եւ ի ճանապարհի մե-
ղաւորաց: Յովսեփ ոչ խաբեցաւ յեգիպտոհոյն, եւ Յոր ոչ թիւրեցաւ
ի բարեկամացն շատախաւսութենէն: Այսպէս եւ Աբրահամ եւ Իսա-
հակ եւ Յակոբ ոչ երբէք մոլորեցան ի պատրանս հեթանոսաց:
Մովսէս ոչ գնաց ի խորհուրդս յեգիպտացիոց[ն] եւ ոչ Եղիա՝ ի խոր-
հուրդս Աբաարու եւ ոչ Դանիել՝ ի խորհուրդս քաղղեացոցն, եւ ոչ մա-
կարայեցիքն՝ ի խորհուրդս Անդիոքոսի, եւ ոչ մարգարէքն ի սուտ
մարգարէիցն: Արդ ամենեքեան սորա երանութիւն ընկալան եւ գովե-
ցան յԱստուծոյ: Ընդ այնոսիկ գովութիւն եւ երանութիւն ունիցին Յեսու

² Սաղ. Ա 1:

³ Հոովմ. Դ 3:

* Չ ե ո ա գ բ ե ու մ՝ նույնի:

** Ա՝ սրբեաց:

- A 231բ *Ռրդին նաւեայ եւ դատ||աւորքն յառաջինք եւ առաքինիք եւ թագաւորք արդարք, որպէս Գեղեոն եւ Բարուկ... [հան]դերձ Գերովրայիւ, եւ Սամսոն, եւ Յեփայի, եւ Սամուել, եւ Գաւթի, եւ Եղեկիա, եւ Յովսիա [եւ] ոչ երբէք խոտորեցան իւրեանց ժամանակսն ոչ ի հանապարհս մեղաւորաց եւ ոչ ի խորհուրդ[ս] ամբարշտաց, այլ էին խորհրդակիցք Աստուծոյ եւ երկնաւոր քաղաքականութեամբ կային յաշխարհի, ըստ*
- B 239բ *այնմ որպէս մարգարէն ասէ. ի դիմաց||Աստուծոյ. «Խորհուրդ իմ ինձ եւ ընդանեաց իմոց»⁴: Արդ ընդ սոսա, զորոց թուեցար զանունս, ասասցուք եւ զերանելի առաքեալսն եւ զմարտիրոսսն եւ զհայրապետսն, որք վկայեցին ճշմարտութեան, երանեցա[ն] ի Տեառնէ ըստ այնմ. «Երանի է ձեզ յորժամ նախատիցեն եւ հալած[իցեն] եւ այլն, զի վարձք ձեր [բազում է] յերկինս, զի այսպէս հալածեցին [զմարգար] եսն» եւ այլն⁵: Եւ առ Պետ[ր]ոս ասէ. «Երանի քեզ, Սիմոն, որդի Յովնանու»⁶: Արդ առաքեալքն ոչ գնացին ի խորհուրդս սուտ առաք[ելոցն] եւ կախարդացն Սիմոնի եւ Վաղենտի եւ Մենանդրեայ: Եւ մարտիրոսքն ոչ գնացին ի խորհուրդս կռապաշտիցն եւ հայրապետքն սուրբ ոչ գնացին ի խորհուրդս հերձուածողացն, թողում ասել եւ զանապատաւոր միանձնացեալսն, որք ոչ երբէք խորհան զխորհուրդ*⁷*
- A 232ա *կենցաղոյս || եւ հայեցան ի մարմնաւոր հեշտութիւն, այլ զվերինն խորհեցան, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ, զի նայ, յորժամ յայտնեցի ի փառաւք, նորա ընդառաջ վերանան եւ ընկալցին երանութեամբ զփառսն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Եւ արդ տողեալ թուեցա[ւ] զ[փառսն] երանելի արանցն եւ արդարոցն, որք ընդունակք եղեն երանութեամբ ըստ հրամանին*
- B 240ա *մանին մ || արգարէին եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բազմակերպարանաւք երանէ զմարդիկ արժանաւոր լինել արքաութեան Աստուծոյ: Արդ ճշմարտութիւն սաղմոսիս ի նոյն ինքն ի Քրիստոս կատարի մարգարէութեամբ, զի նա իսկ է այրն երանելի, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, քանզի «ոչ արար մեղս եւ ոչ գտաւ անարէնութիւն** ի բերան նորա»⁷, ըստ մարգարէին, որպէս եւ ինք[ն] իսկ ասէ. «Ո՞վ որ յանդիմանեցէ զիս վասն մեղաց»⁸: Իսկ երանակ[ան] անունն միայն Աստուծոյ է սեփական, ըստ այնմ յորում առաջ իսկ ասաց Պաւղոս. «Երանելին, եւ միայն հզարն թագաւոր թագաւորաց եւ Տերն տերանց»⁹ Եւ այլն եւ այս Երրորդութիւն եւ քանզի ինքն միածին է ընդ Հաւր իսկակից եւ փառակից Սուրբ Հոգին, ոչ եւս վերջանա*
- A 232բ *յերանութեանցս կոչմանց: || Իսկ երանութիւն պարառութիւն է ամենայն*

4 Ես. ԻԴ 16:

5 Մատթ. Ե 11—12:

6 Մատթ. ԺԶ 17:

7 Հմմտ. Սաղ. ԼԱ 2:

8 Յովհ. Ը 46:

9 Ա Տիմոթ. Զ 15:

* Ե՛ գնացին ի խորհուրդ փխ խորհան զխորհուրդ:

** Ե՛ նենգութիւն:

բարեաց եւ այս նորա ճշմարտութեամբ է, զի շիբ որ հաւասարորդ նորա բարեացն, զի ինքն է բարի եւ աղբիւր բարութեանց եւ ամենայն, ինչ որ առ եղականքս, մասն է բարեաց, ի նմանէ յառաջ գայ: Ըստ որում ասէ. «Ամենայն տուրք, բարիք եւ պարգևը կատ[արեալ]ք ի վերուստէն իջեալ առ ի Հարէն լուսոյ»¹⁰. Եւս է Հայր, Եւս է Որդի, Եւս է եւ Հոգին Սուրբ. Կենդանի է Հայր, Կենդանի է Որդի, Կենդանի է եւ Սուրբ Հոգին: Նոյնպէս եւ բարութիւն, նոյնպէս երանութիւն, ըստ B 240բ այսմ խորհրդեան ի Քրիստոս կատարի* երանութիւն մ||արգարէիս աստուածութեամբ եւ մարդկութեամբ, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, փարիսեցոցն, դպրացն եւ ոչ ի ճանապարհս մեղաւորաց եւ ամբարտաւան աղգին հրեից եւ ոչ նստաւ յաթոոս ժանդարարոյ դատաւորացն: Այլ ատելով ատեաց նա զսնափառութիւն զստոց առաքելոց եւ [զ]չարութիւն զստոց մարգարէիցն՝ ասելով. «Ի բաց կացէք A 233ա մշակ(ք) նենգաւորք ոչ զիտեմ զձեզ»¹¹|| եւ զայսոցիկ ասէ զորս մոլարս անուանեն աստուածային գիրք: Դարձեալ գայն ի դեպ է ասել, զի ոչ գնաց ի կամս** ամբարիշտ փորձապետին եւ ոչ պատրեցաւ*** ի նմանէ, որպէս զԱդամն առաջին: Այլ յաղթեաց փորձողին մերով բնութեամբս եւ մեզ շնորհեաց յաղթութիւն ընդդէմ բանսարգուին, բանզի սաստեաց նմայ եւ ասաց. «Երթ յետս իմ, սատանայ»¹²: Եւ ապայ մատեան հրըշտակը եւ պաշտէին զնայ: Նմայ փառք յախտեան:

Յաջորդի սոյն այսոսիկ յարմարի բանամտութեամբ եւ իրաւք, զի յառաջնումն երանեաց զառաքինիսն վասն ի շարեացն ի բաց մերկանալոյ: Եւ այժմն գովէ զայնոսիկ, որ կամաւք իւրեանց հետեւին արինացն Աստուծոյ առաքինութեամբ, վասն զի ասէ. «Այլ արէնս Տեառն նմանի բանս արինացն Աստուծոյ, զոր պատուիրեաց ժողովրդեան ի ձեռն Մովսէսի, մի մեկնեսցի զիր արինացս այս ի բերանոյ ձերմէ»¹³ A233բ եւ «խոկասջիք ի դա ի||տվե եւ ի||գիշերի»¹⁴, «նստել ի տան եւ ի B 241ա գնալ ի ճանապարհի եւ ի ննջել եւ ի յառնել»¹⁵ որպէս ինքն իսկ երանելին Դաւիթ յայլում սաղմոսի ասէ իբրեւ պարծանք իմն. «Պատուիրանք քո խաւսք իմ էին»¹⁶ եւ այլուր «Աւրհնեցից զտեր յամենայն ժամ»¹⁷, դարձեալ՝ «[խրատք] քո ուսուցին զիս» եւ այլուր՝ «Բաց զաշս իմ եւ նայեցայց ի սքանչելիս աւ[րինաց քոց]»¹⁸, եւ Եսայի մարգարէ

10 Յակ. Ա 17:
 11 Բ Կորնթ. ԺԱ 15:
 12 Մատթ. ԺԶ 23, Մարկ. Ը 33:
 13 Հմմտ. Սաղ. ճժԸ 72, Յեսու ԻԲ 5:
 14 Սաղ. Ա 2:
 15 Բ օրէնք 2 7, ԺԱ 19:
 16 Սաղ. ԺԸ 143:
 17 Սաղ. ԼԳ 2:
 18 Յաղ. ԺԷ 36, ճժԸ 18:
 * Ե՝ պատշաճի:
 ** Ե՝ ի խորհուրդս փխ ի կամս:
 *** Ե՝ պարտեցաւ փխ պատրեցաւ:

ասէ աւելինն. «Երատ Տեառն բանայ զականջս ունկն ի լսել»¹⁹ եւ դարձ[եալ] ասէ. «Տէր Տէր տայ ինձ լեզու խրատու [խաւ]սել ի ժամու գրանն»²⁰: Այսպիսի արինակաւ եւ մեզ պարտ է խորհել եւ խաւսել զարէնս աւետարանին եւ ի բաց կալ յաշխարհական ցանկութեանց եւ առ Քրիստոս ընթանալ, որպէս ազգն Ղեւեա հասեալք առ Մովսէս եւ ի բաց գնացեալք յորթոյ անտի եւ «քանզի արէնս Տեառն ունէին զկամս իւրեանց որդիքն Ղեւեայ»²¹, վասն այսորիկ առ Մովսէս դարձան: «Եւ գինեցան ի վերայ եղբարց իւրեանց եւ կոտորեցին երեք հազար ի դրանէ ի

- A 234ա գուրն»²²: Եւ մի եղիցուք որպէս զԱբար որդի Արմեայ՝ կամ իրրեւ զԱբար եւ զԵղարել, որ արհամարհեցին զնզովս արինացն Աստուծոյ եւ ի բաց կացին յարհնութեանցսն, զոր գրեաց Մովսէս եւ յետ նորա որդի
- B 241բ նաւեայ Յեսու, զի գառաջին զգրեալն ի Մովսէսէ արհամարհեցին եւ երկրորդ զԵսուայն, [որպ]էս զիրք թագաւորութեանցն եւ Մնացորդացն ցուցանէ: Բայց ոչ միայն հրեական արինացն ասէ, այլեւ զաւետարանին, զոր եթէ արասցէք, կեցցէք ի նմին, զի Քրիստոս ոչ եկն լուծանել արէնսն, այլ լնուլ եւ կատարել առ[աւ]ելութեամբ իւր ... իր ունին, զի արէնքն զկատարումն ... րգ... լու, իսկ աւետարանն զսկզբա[նն] ... խաշն բառնալ հրամայէ եւ ծնանէ ... սգոյ եւ համբերել ի սպառ, ես սիրէ... զհայր եւ զմայր, աղբատս... սուգ ունել ի վեր[ա ամենայն] ... ել, քաղցնուլ արդարութեամբ, ողորմած լինել, սուրբ ունել զսիրտս, խաղաղարար լինել, հալածանս եւ նախատանս ընդունել յաղագս Քրիստոսի, նմանող լինել մարգարէիցն եւ ամենայն արդարոցն, զորոց յառաջագոյն նշանակեցար զանուանս, բանզի նորա ամենեքեան յանարէնս, Աստուծոյ ունէին զխորհուրդս իւրեանց եւ զկամս իւրեանց խտտորել ի շարէ եւ առնել զբարի:

* * *

«Հիմունք նորա ի լեառն սուրբ»²³ նորա սերէ հիմնացեալք են յեկեղեցոյ: Եւ նախնիք բարիք բարեկարգութիւն սորայ մարգարէքն հոգեկիրք ի ժամանակի երիցութեան, իսկ գերապատուութեան եւ շնորհի

- A 234բ առատութեամբ՝ զառաքեալսն: Ասէ քրիստոսունակն Պաղոս. «զորս եղ Աստուած յեկեղեցոջն այս է. նախ զառաք[եա]լս, երկրորդ՝ [զմարգարէս]»²⁴, սակայն ի համաձայնակի [յ]արմարութիւն նոյն եւ մի է ի պետս հաստահեղոյս ի բանս մարգարէ այնու գուշակ հոգեկեցութիւն Գաւթայ գտանեմք յոյժ իր սբանշա[յ]արմար արվեստակեալս խորհրդական բանիւք վասն հիմնարկութեան սրբոյ եկեղեց[ւոյ] եւ ութանասներորդ վեցերորդ սաղմոսին, որ ի թիւս խորհրդականս հաստատեցաւ վասն ութուտասներեկան կատարեալս, զկատարմանց ամենայն:

19 Հմմտ. Ես, Լ 21, Լթ 3:

20 Ես. Ծ 4:

21 Սաղ. Ա 2:

22 Հմմտ. Յեսու է 4—5:

23 Սաղ. 92 2:

24 Ա Կորնթ. ԺԲ 28:

- յաւիտեանց ունի նշանակ, յորում աւարտի խորհուրդ եկեղեցոյ յառաջ-
նորդն յաւիտեան, իսկ զվեցերորդն յաւելուած արար, զի վեց հազա-
րեան դարու շինան հաւատացեալքն ի Քրիստոս տուն եւ բնակարան
Սուրբ Երրորդութեան, ամենայկատար շնորհ Հոգոյն Սրբոյ ի հրեից եւ
ի հեթանոսաց նոր Իսրայէլի Քրիստոս, ոչք քարինք սուրբ հոլովեցան ի
A 235ա հիմունս* եկեղեցոյ, զորոց եւ ասէ մարգարէն. «Հիմունք նորա ի
լեառն սուրբ»: Հիմունք վերատրապէս սկսբունք են աստուածային խոր-
հրդոցն**: Նախ երկին առաջոյ եւ իմանալի բնակչաց նորա պատրաս-
տութեան, յորս բնակել ասի անսահմանելի աստուածութեան: Եւ ապա
դրախտն աստուածատունկ, որ եւ ընթացարան Աստուծոյ անուանի.
«Նստի ասէ յերկնից յերկինս եւ գնայր ի դրախտի անդ»²⁵: Վասն որոյ
եւ յանց լերանց բարձրագունից²⁶ ըստ տեղոյ եւ խորհրդեան ասէ մար-
գարէս՝ եղեալ զհիմունս եկեղեցոյ ի հրշտակս եւ ի մարդիկս, յորս
բնակէ եւ գնայ. ի բնակիչս յերկրի ի դրախտին հիմացոյց զսայ: Եւ ի
խորհուրդս ապաստանի տանն նոյ[ի] ի լերին[ն] Կորթուաց, յորում
նստաւ նա զիշանել շրհեղեղին եւ ի լերինն ամուրհացիոց, ի խորանն
Արրահամու ընդունարան Աստուծոյ եւ հրշտակաց եւ ի Բեղել, յորում
A 235բ տուն Աստուծոյ անուանեց, ի Սինեա, որում տուն անուանեցաւ Աս-
տուծոյ, ի միտս Մովսիսի կարգագրեցան: Սոքա են լերինք սուրբք, ուր
հաստատեաց բարձրեալ զհիմունս նոր Սինի, իսկ կատարեալն խոր-
հուրդն կատարեալ եւ բարձրագոյն, քան զամենայն բարձրագոյնս
տնաւրինութիւն Քրիստոսի՝ զլուխ եկեղեցոյ, յոր[ում] եւ ամենայն
մարմին պատշաճի եւ աճէ: Մինչեւ ի հանդերձեալն եկե[ղե]ցականու-
թիւն, յորում եւ հիմացեալ են առաքեալք եւ մարգարէքն ըստ Պաւղոսի.
զոր եւ ասէ. «Հաւատով արդարացեալս հիմնացեալք, ասէ, յառաքեալսն
եւ մարգարէս եւ զլուխ ունիք զՔրիստոս զսուրբն սրբոց»²⁷: Եւ լերինն
նմանեցուցանէ զամբիժ հաւատսն զառաքելական եկեղեցոյ, զոր եւ
քաղաք նշանաւոր ասէ Տէր մեր յաւետարանի անդ: «Ոչ կարէք անթաք-
չելի»²⁸, այսինքն՝ յանվանելի դաւանման Պետրոսի, որով ունին, այլ
A 236ա փականս արբա[յ]ութեան, զկապանս եւ զուղղո՞ւմն կողմնակի իշ-
խանութեան: Լուծցէ զտղիտութիւն, զանհաւատութիւն*** եւ զմեղս եւ
կապեցցէ ընդ աւետարանի հաւատսն: Եւ ընդ շնորհս սրբարար յայ-
տոսիկ**** ի հիմուն[ս] հիմացեալ հաստատեցան համաժողով կաթողի-
կէ սուրբ եւ հոլովեցան ի սայ քարինք սուրբք ըստ մարգարէութեան,
որք ի զանազան մասունսն հոգոյն փաղփուն եւ կարծր հաւատովք եւ
տաքինութեամբ զպաշտանս սրբութեամբ, բանին ճշմարտութեա[մբ]
եւ արդիւնարեր շահեկանութեա[մբ], անձնական նուիրաւք եւ արեան

25 Հմմտ. Սաղ. Կէ 34:

26 Հմմտ. Սաղ. ՂԴ 4:

27 Հմմտ. Եփես. Բ 20:

28 Հմմտ. Մատթ. Ե 14:

* Չ ե ո ա գ ր ու մ՝ հումունս:

** Չ ե ո ա գ ր ու մ՝ սկսբունք են Աստուած են աստուածային...:

*** Չ ե ո ա գ ր ու մ՝ բ ա ո ս կ ր կ ն վ ա ծ է:

**** Չ ե ո ա գ ր ու մ՝ յայտ ոսկի:

- վկայութեամբ, որով զեղու ի նոսայ սերն հայրական, ի Տեառն քսա [յ]աջորդիս: «Սիրէ Տէր զըրունս Սիրնի»²⁹. Գրունք վերին Սիրնի երկնաւոր բազաբի են եկեղեցիք հաւատացելոց, որք եւ մարմին են բանին Աստուծոյ, որք դատերք ասին Սիրնի իբրու ծնունդ առաջնոյն. Այս եւ ծնունդ երկ[ն]աւոր գահից անուանին, վասն այսրէն անդ երանելոյն ॥
- A 236բ եւ յառազատն յայն մտանելոյն: Սակայն աստէն սկսանի սիրել եւ բան: Եւ է սայ հաւատն ճշմարտութեան, [առաջն] որդութեան, որդին Աստուծոյ: Եւ զինքն դուն անուանեաց եւ հաւատոյն դրամբ ի նոյն [յ]որդորեաց. «Ընդ իս եթէ որ մտց[է] ճարակ գտցէ»³⁰ եւ՝ զբանին կերակուրն: Եւ զմարմին կենարար եւ զկեցուցիչ են եւ դրունք առաքինութեան՝ իմաստուն հոգոյն բանականի եւ զարութեանց զգա[յ]ութեանց բաժանեալք, որովք, ընդ որս մտեալ, կարասցուք յիմաստութիւն յԱստուծոյ տունն յարիարար եւ ողջախոհութեամբ, զորս դի[ւ]րին է գտանել հետեւողաց ուղիղ բանին ճշմարտութեան: «Ձալսոսիկ դրունս սիրէ Տէր բան զամենայն յարկսն Յակորայ»³¹: Այսինք[ն]՝ զստուերական արինաց տեղիս կատարման. եւ զխորանին, եւ զտաճարին, եւ, որ ի Սինա արինադրեցան, Հագարա աղախնոյն ծնունդ անուանին
- A 237ա յառաքելոց³²: Իսկ վերին Սիրն ॥ ազատ է մալքն խաղաղութեան [ո՞րդ-ւ]ոց նոր Սիրնի, զոր սիրեաց զըրունս հաւատոցն արդարութեան, զի հաւատ]ով սիր[ո] գտցուք զարդարութիւն եւ դրամբ շրթանց* խոստովանիմք զսիրկութիւն: Իսկ յառաջին արք** Յակորաւ տարագիր եղէն սրտիւք եւ ական[ջ]աւք եւ շրթամ[բ]ք այսմն դաւանութեան ատարք եղէն ի մարէ եւ խաբեցան սուտ*** յարգանդէ եւ խաւսեցան սուտ, բանզի ստոյն իսկ զբանէ հետեւեցին կամաց եւ խորհրդոց, սպան զաէր այդոյն ընդ ծառաիցն****, առաքելոց առ մշակսն³³, եւ ինքեանք տարագրեցան անդ ի ծառայութենէն: Սիրելիքն յառաջ ատելիք եղէն յետոյ, զի շանց կա[տ]աղեաց եւ իժից ծննդոց նմանեցան եւ տակաւին եւս թուք, հայհոյութիւն ի նե[ր]քոյ շրթանց նոցա: Իսկ դրունք նորա Սիրնի. Սիրտք եւ շրթունք առաքելոցն բանան բանիւք զսիրտս հաւա-
- A 237բ տացելոց ի Քրիստոս, զի բացին շրթունք նոցա ի փառատրութիւն շինողին եկեղեցի, որպես եւ յաջորդս ցուցանէ. «Փառաւորեալք խաւսեցան վասն քո, բազալթ Աստուծոյ»³⁴: Վասն զի քարոզութիւն առաքելոցն եւ նախադրութիւնք մարգարէիցն երգս հոգննուագ: [յ]արմարեցին ի տունս այսմիկ, որ է եկեղեցի Աստուծոյ կե[ն]դան[ւ]ոյ եւ բազաբ հոշակաւոր ամենաժողով [բազմա՞ց]եալ շահիւք եւ վերամբարձ պար-

29 Սաղ. 22 2:

30 Յովհ. 6 9:

31 Սաղ. 22 2:

32 Հմմտ. Գաղատ. Գ 24—25:

33 Հմմտ. Մատթ. ԻԱ 33—40:

34 Սաղ. 22 4:

* Զ ե ա գ ը ու մ՝ շրթանց:

** Զ ե ա գ ը ու մ՝ արկ:

*** Զ ե ա գ ը ու մ բառս բերված է կետազծերի մէջ:

**** Զ ե ա գ ը ու մ՝ ծառիցն:

սպար, հաւատով, սիրով եւ սրբութեամբ եւ հրշտակավաները* կար-
 քաւր եւ կրօնիւք՝ ի հրշտակաց Աստուծոյ պահպանեալք, որոց երգա-
 կիցք եղէն ի տան Տեառն տնաւրինութիւն Միածնի Աստուծոյ՝ ասելով.
 «Փառք ի բարձունս Աստուծոյ»³⁵: Վասն զի Աստուած Հայր, ի փառա-
 տրեալ յանդրանիկ փառաւորչաց իւրոց, խաւսեցաւ նոց[ա] եւ մարգա-
 րեաւր առաջնաւր զփառս Միածնին իւրոյ այնմիկ, որ խաւսի զխաղա-
 դութիւնս ընդ հեթանոսս եւ առ[ն]է խաղաղութիւնս իւրոց: ||| . . .

A. KESSEYAN

НОВОНАЙДЕННЫЕ ФРАГМЕНТЫ «ТОЛКОВАНИЯ
 ПСАЛМОВ» ИОАННА ЗЛАТОУСТА

Резюме

Публикация содержит новонайденные фрагменты армянского пе-
 ревода «Толкования Псалмов» Иоанна Златоуста (Пс. 1, 1—2. 86, 2),
 греческий оригинал которых не сохранился. Текст этих фрагментов
 подготовлен на основе армянских рукописей Матенадарана № 472 и
 2783.

H. KIOSSEYAN

FRAGMENTS NOUVELLEMENT DECOUVERTS DU
 „COMMENTAIRE AUX PSAULMES“ DE JEAN CHRYSOSTOME

Résumé

Cette publication présente des fragments nouvellement découverts
 de la traduction arménienne du „Commentaire aux Psaulmes“ de Jean
 Chrysostome (ps. 1, 1—2. 86, 2), dont l'original grec ne s'est pas con-
 servé. Le texte des fragments a été préparé d'après les manuscrits ar-
 méniens nos. 472 et 2783 du Maténadaran.

³⁵ Ղուկ. ԺԹ 38:

* Զ Ե Ա Ս Պ Ր Ո Ւ Մ՝ հրշտակավաները: